



Պ Ա Շ Տ Օ Ն Ը Կ Ը Ն

ԿԱԹՈՒՂԻԿՈՍԱԿԱՆ ԱՄԵՆԱՊԱՏԻԻ Տ. ՏԵՂԱԿԱԼԻ
ՏՆՕՐԷՆՈՒԹԻԻՆՆԵՐԻՑ

Գրութիւն Անդրկովկասի բաժ. խուլերի և համրերի
Հոգաբարձութեան անունով, որով ծանուցուեց, թէ առա-
ջադրուել է Հայոց թեմակալ Առաջնորդներին, որ տարւոյս
մարտի 18-ին խուլերի և համրերի օգտին Հայոց եկեղե-
ցիներում գանձանակ շրջեցնեն և գոյացած դրամն ուղար-
կեն յիշեալ Հոգաբարձութեան: 7 փետրուարի թ. 2298:

Առաջադրութիւն ս. Էջմիածնի ս. Սինօղի անունով,
որի հետ ուղարկուեց Սինօղի ներկայացրած Մայր Տա-
ճարի, Վանական կառավարութեան և ազարակի 1912 թ.
հաստատած նախահաշիւը՝ առաջադրելով ճշտութեամբ գոր-
ծադրել այն 1912 թ. ընթացքում: 10 փետրուարի. թ. 2310:

Առաջադրութիւն Մայր Աթոռի միաբան Տ. Սիօն
վարդապետի անունով, որին յանձնարարուեց մեծ պատի
հինգ շաբաթուայ կիւրակէի ժամերգութիւնից յետոյ Վա-
ղարշապատի ս. Աստուածածին եկեղեցում ժողովրդին աւե-
տարանի ոգով քարոզ կարգալ: 10 փետրուարի. թ. 2313:

Առաջադրութիւն Նոր-Նախիջևանի և Բեսսարաբիայի թեմական Առաջնորդի անունով, որի հետ ուղարկելով Սիմֆերոպոլի Երուանդ քահանայ Նալբանդեանի ներկայացրած Պետրոս Թոփալեանի նուիրաբերութեան թղթի պատճէնը՝ առաջադրուեց յայտնել այդ առթիւ իւր եզրակացութիւնը և Սիմֆերոպոլի եկեղեցական-ծխական հոգաբարձութեան որոշումն: 11 փետրուարի. թ. 2315:

Օրհնութեան թուղթ Մոսկուայի եղբ. Թորոսեանների անունով, նրանց Մայր Աթոռի Գէորգեան Հոգևոր ձեմարանին կից բնական զիտութեանց բաժանմունք շինելու համար 40,000 ռուբլի նուիրաբերելու առթիւ: 16 փետրուարի. թ. 2320:

Առաջադրութիւն Մոսկուայի Յարութիւն աւագ քահանայ Պոպովեանի անունով, որի հետ ուղարկուեց տիկին Աննա Պոպովեանին յանձնելու համար Տարօնի թեմի Առաջնորդ Տ. Ներսէս եպիսկոպոս Խարախանեանի «Պոպովեան» վարժարանի շինութեան առթիւ կազմած նախահաշիւը: 16 փետրուարի. թ. 2321:

Առաջադրութիւն Ղարաբաղի թեմի ժամանակաւոր կառավարիչ Տ. Զաւէն վարդապետի անունով, որով պատուիրուեց աշխատել, որքան հնարաւոր է, Ղարաբաղի թեմական դպրանոցի 50-ամեայ յորելեանի առթիւ ապահովել նրա գոյութիւնը: 17 փետրուարի. թ. 2323:

Մակագրութեամբ յանձնուեց ի տնօրէնութիւն Սինօզի Ղարաբաղի թեմի ժամանակաւոր կառավարիչ Տ. Զաւէն վարդապետի թ. 337 յայտարարութեամբ ներկայացրած Ղարաբաղի թեմի կալուածների դրութեան համառօտ տեղեկագիրը ի տնօրէնութիւն: 17 փետրուարի. թ. 2324:

Առաջադրութիւն Մայր Աթոռի տպարանի վարչութեան անունով, որով ուղարկուեց Մայր Աթոռի միաբան Տ. Խորէն վարդապետ Լազարեանի կազմած էջմիածնի 1913 թ. օրացոյցը և պատուիրուեց տպագրել տալ այն: 17 փետր. թ. 2326:

Առաջադրութիւն Վրաստանի թեմի ժամանակաւոր կառավարիչ Տ. Եփրեմ եպիսկոպոսի անունով, որով յանձնարարուեց յայտնել նպաստամատոյց յանձնաժողովին, որ իւր մօտ մնացած 75253 ո. 64 կոպ. գումարից ցորէն դնել և ուղարկել Կրղէն գիւղացիներին, որոնք գտնուում են քաղցած դրութեան մէջ: 19 փետրուարի. թ. 2327:

Գրութեամբ ուղարկուեց ի գիտութիւն Կովկասի Հայոց Բարեգործական խորհրդին Տ. Եփրեմ եպիսկոպոսի անունով տրուած թ. 2327 առաջադրութեան վաւերական պատճէնը: 19 փետրուարի. թ. 2328:

Մակագրութեամբ առաջադրուեց Մայր Աթոռի տպարանի վարչութեան ուղարկել Ատրպատակի Առաջնորդ Տ. Կարապետ եպիսկոպոսին՝ թեմի տպարանի համար Մայր Աթոռի տպարանից նուէր մի ամբողջ մամուլի տառեր: 19 փետրուարի. թ. 2330:

Առաջադրութիւն Վրաստանի թեմի ժամանակաւոր կառավարիչ Տ. Եփրեմ եպիսկոպոսի անունով, որով յանձնարարուեց յայտնել, թէ Մայր Տաճարի վերանորոգութեան վերահսկողութիւնն ճարտարապետական յանձնաժողովի կողմից սում է յանձնուած, որպէս զի սկսել կատարել վերանորոգութեան գործը: 23 փետրուարի. թ. 2334:

Առաջադրութիւն Վաղարշապատի գործակալ Տ. Սարգիս քահանայ Ասլանեանի անունով, որով թոյլատրուեց թաղել տեղական եկեղեցու գաւթում, ծխական հոգաբարձութեան խնդրի համեմատ, Վաղարշապատցի Յարութիւն Մարգարեանի կնոջ՝ Թելլուի գիակը, որի ամուսինը նուիրել է եկեղեցու օգտին մօտ 4—5000 ո.: 27 փետր. թ. 2338:

Առաջադրութիւն ս. Էջմիածնի Սինօզի անունով, որով ուղարկուեց Մայր Աթոռի տպարանի, Շամախու և Աստրախանի կոնսիստորիաների 1912 թ. հաստատած նախահաշիւները և առաջադրուեց ուղարկել այն ըստ պատկանելոյն ի ճիշտ գործադրութիւն: 27 փետրուարի. թ. 2339: